

Մեծամոր համայնքի հարգելի՛ բնակիչներ

Այսօր լրացավ Տարածքային ինքնակառավարման մարմինների՝ որպես վարչատարածքային բաժանման համակարգ, ձևավորման 26-ամյակը:

Մեր պետականության կայացման, զարգացման գործում այս համակարգի ձևավորումը լուրջ ձեռքբերում է:

Մեծամոր խոշորացված համայնքը իրականություն դարձավ հենց ՏԻՄ ընտրությունների շնորհիվ, որը մեզ հնարավորություն է տալիս ավելի մեծ ներուժ կենտրոնացնել համայնքի տնտեսական, մշակութային, կրթական կյանքի զարգացման վրա: Այս ամենից բացի շատ կարևոր է, որ մեր գործունեության արդյունքում մենք հասնենք տարածքների համաչափ զարգացման:

Շնորհավորում եմ բոլորիս այս կարևոր օրվա կապակցությամբ: